

**Պատասխաններ**  
**Աշխարհագրություն առարկայի 2021թ. դպրոցական օլիմպիադայի**  
**հանրապետական փուլի**

**11-12-րդ դասարաններ**

1. **Աշխարհահամակարգը** աշխարհագրական թաղանթի փոխկապակցված և փոխադարձորեն իրար վրա ազդող բաղադրիչներից բաղկացած տարածքային (աշխարհագրական) համակարգ է: Նրա **գլխավոր բաղադրիչներն են՝** բնության տարրերը, բնակչությունը և տնտեսությունը: Աշխարհահամակարգի **բնորոշ գծերն են՝** ամբողջությունը և բաղադրիչների փոխադարձ կապն ու փոխալայմանավորվածությունը: Աշխարհահամակարգերը լինում են՝ **բնական** (օրինակ՝ անապատ, գետ, լիճ), **հասարակական** (օրինակ՝ տնտեսական շրջան, գործարան) և **բնահասարակական** (օրինակ՝ ջրամբար, մարդածին լանդշաֆտ):
2. **Համաաշխարհագրական մեթոդները** 8-ն են: Դրանք են.
  1. նկարագրական, 2. համեմատական, 3. դաշտային, 4. վիճակագրական, 5. մաթեմատիկական, 6. օդատիեզերական, 7. աշխարհատեղեկատվական (ԱՏՀ), 8. քարտեզագրական:
3. **ՅՈՒՆԵՄԿՈ-ն** ՄԱԿ-ին առընթեր միջազգային կազմակերպություն է, որի գլխավոր նպատակն է բնապահպանական կրթության և գիտելիքների տարածումը, բնական ու մշակութային արժեքների պահպանումը: **ԲՊՄՄ – ն** բնության պահպանության միջազգային միությունն է, որի գլխավոր խնդիրը կենդանի բնության պահպանությունն է, միջազգային Կարմիր գրքի կազմումը և հրատարակումը: **ՅՈՒՆԵՊ – ը** ՄԱԿ –ին կից բնապահպանական հատուկ մասնագիտացված կազմակերպություն է, որի գլխավոր խնդիրը բնական միջավայրի համամոլորակային մոնիթորինգն է:
4. Յուրաքանչյուր **էկոհամակարգ** բաղկացած է 3 հիմնական բաղադրիչներից՝ պրոդուցենտներից, կոնսումենտներից և ռեդուցենտներից:  
**Պրոդուցենտները (արտադրողներ)** անօրգանական նյութերից օրգանական նյութեր սինթեզող օրգանիզմներն են: Դրանք հիմնականում կանաչ բույսերն են:  
**Կոնսումենտները (սպառողներ)** պատրաստի օրգանական նյութը օգտագործողներն են: Դրանք հիմնականում կենդանիներն են:  
**Ռեդուցենտները քայքայող** օրգանիզմներն են՝ բակտերիաները և սնկերը:

5.



